ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԱԶՆԱՎՈՒՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան Նոյեմբերի 24, 2021թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն)՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանի, և «Ազնավուր» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ)՝ ի դեմս գործադիր տնօրեն Կրիստինա Սարկիսյանի (այսուհետ՝ Կողմեր), նպատակ ունենալով ընդլայնել մշակույթի ոլորտում միջին մասնագիտական կրթություն ստացող երիտասարդների կրթական հնարավորությունները և նպաստել նրանց հետագա մասնագիտական գործունեությանը, կնքեցին համագործակցության հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

I. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Կողմերը համագործակցում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Կողմերի կանոնադրական փաստաթղթերով սահմանված իրավասությունների և սույն Հուշագրով նախատեսված պարտականությունների շրջանակներում՝ դիտարկելով միմյանց որպես ռազմավարական գործընկերներ՝ կրթական, մշակութային, ուսումնական և նորարարական բնագավառներում համագործակցության զարգացմանը նպաստելու նպատակով:

2. Սույն Հուշագրի իրականացման շրջանակներում Կողմերի համագործակցությունը կատարվում է կամավոր հիմունքներով՝ ղեկավարվելով շահերի ընդհանրության, գործողությունների համաձայնեցվածության և կառուցողական համագործակցության սկզբունքներով:

3. Կողմերի նպատակն է զարգացնել համագործակցությունը, համախմբել և համակարգել ջանքերը հետևյալ հարցերի շուրջ.

1) աջակցություն Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացմանը,

2) աջակցություն Քոլեջի առաջխաղացմանը՝ ձգտելով այն դարձնել տարածաշրջանում տվյալ բնագավառում առաջատար ուսումնական հաստատություններից մեկը:

II. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Նախարարությունը պարտավորվում է.

1) աջակցել Քոլեջը Շառլ Ազնավուրի անվամբ կոչելու գործընթացի կազմակերպմանը,

2) մշակել և կատարելագործել մշակույթի ու արվեստի ոլորտում միջին մասնագիտական կրթության առկա պետական կրթական չափորոշիչները, համապատասխան ուսումնական և մոդուլային ծրագրերը,

3) նպաստել Ազնավուրի մշակութային ժառանգության և մարդասիրական արժեքների պահպանմանն ու տարածմանը,

4) աջակցել Քոլեջի նյութատեխնիկական բազայի համալրման և շենքային պայմանների բարելավման աշխատանքներին,

5) աջակցել Քոլեջում սովորողների մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման աշխատանքների կազմակերպմանը,

6) աջակցել «Ազնավուր» հիմնադրամի և Քոլեջի միջև ուղիղ կապի հաստատմանն ու զարգացմանը՝ ստեղծելով Քոլեջի կոլեգիալ կառավարման խորհրդում Հիմնադրամի երկու անդամի մասնակցության հնարավորություն,

7) նպաստել Քոլեջի, մշակույթի և արվեստի բնագավառի մասնագիտական կադրերի վերապատրաստման նպատակով համատեղ սեմինարների, հանդիպումների և խորհրդատվությունների կազմակերպմանը:

2. Հիմնադրամը պարտավորվում է.

1) գործադրել նպատակաուղղված ջանքեր՝ աջակցելու Քոլեջի ուսանողների կրթական ու մասնագիտական առաջընթացին՝ կազմակերպելով վարպետության դասեր, սեմինարներ և այլ ձևաչափի դասընթացներ,

2) Հիմնադրամի կողմից Երևանում ստեղծվող «Ազնավուր» կենտրոնի բացումից հետո այն որպես հարթակ օգտագործել ուսանողների մասնագիտական կարողությունների բացահայտման և կատարելագործման համար,

3) աջակցել Քոլեջի առարկայացանկում ներդրվելիք՝ Շառլ Ազնավուրի արվեստին վերաբերող միջառարկայական ծրագրի մշակմանը,

4) ջանքեր ներդնել Քոլեջի նյութատեխնիկական բազայի համալրման և շենքային պայմանների բարելավման աշխատանքներին աջակցելու ուղղությամբ,

5) աջակցել Քոլեջի դասախոսների վերապատրաստման և մասնագիտական կատարելագործման ծրագրերի իրականացմանը,

6) օժանդակել Քոլեջում սովորող երիտասարդների շրջանում մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման աշխատանքների կազմակերպմանը:

III. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից՝ 3 տարի ժամկետով: Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ սույն Հուշագրի կատարման ժամկետը կարող է երկարացվել:

2. Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ՝ ձևակերպված առանձին արձանագրություններով, որոնք կազմում են սույն Հուշագրի անբաժանելի մասը:

3. Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Հուշագիրը՝ նախապես գրավոր տեղեկացնելով մյուս Կողմին 30 (երեսուն) օր առաջ: Սույն Հուշագրի դադարեցումը չի ազդում Հուշագրի շրջանակներում որևէ ընթացիկ ծրագրի կամ նախագծի իրականացման վրա, եթե Կողմերը որևէ այլ որոշում չկայացնեն:

IV. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Կողմերը համագործակցում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ հիմնվելով փոխադարձ հարգանքի, հավասար իրավունքների և գործընկերության սկզբունքների վրա:

2. Սույն Հուշագիրը չի ազդում Կողմերի մասնակցությամբ այլ պայմանագրերից բխող՝ Կողմերից յուրաքանչյուրի իրավունքների և պարտականությունների վրա և Կողմերի միջև չի առաջացնում որևէ գույքային և/կամ ֆինանսական պարտավորություն:

3. Սույն Հուշագրի շրջանակներում Կողմերի՝ քաղաքացիաիրավական գործարքի բնույթ կրող փոխհարաբերությունները (փոխհաշվարկները)՝ միմյանց միջև և/կամ երրորդ անձանց հետ, պետք է ձևակերպած լինեն առանձին պայմանագրերով՝ ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

4. Հուշագիրը կազմված է երկու հավասարազոր հայերեն բնօրինակից:

V. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից՝	«Ազնավուր» հիմնադրամի կողմից՝
ՎԱՀՐԱՄ ԳՈՒՄԱՆՅԱՆ	ԿՐԻՍՏԻՆԱ ՍԱՐԿԻՍՅԱՆ
Նախարար	Գործադիր տնօրեն